


ПОЛИТИКА

Բուլղարիան Սևծովյան տարածաշրջանի քաղաքական զարգացումների համատեքստում. Գեորգի Պրվանովի նախագահության տարիներին «2002-2012 թթ»

Հովսեփյան Լալիտա Ե.

մագիստրոս, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0009-7160-4606>
lalintahovsepyan@yahoo.com

ՀՏԳ՝ 327, 327.8; EDN: GLUUCM

DOI: 10.58587/18292437-2025.2-29

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Սևծովյան տարածաշրջան, արտաքին քաղաքականություն, արտաքին քաղաքականության առաջնահերթություններ և ուղղություններ, Բուլղարիա, Գեորգի Պրվանով, Վլադիմիր Պուտին, «Հարավային հոսք», ԵՄ էներգետիկ երրորդ փաթեթ, ՆԱՏՕ

Болгария в контексте политических процессов в Черноморском регионе: в годы президентства Георгия Пырванова (2002-2012 гг.)

Овсеян Лалита Е.

Магистр, факультет международных отношений, Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. Статья обсуждает политику Болгарии в Черноморском регионе, что делает ее важным региональным игроком. Период с 2002 по 2012 год был значимым для Болгарии, так как в это время произошли ряд важных изменений, повлиявших не только на страну, но и на весь регион. В целом, статья рассматривает, как президент Георгий Пырванов сумел интегрировать Болгарию в западные институты через проведение демократических реформ, при этом активно участвуя в ряде энергетических проектов с Россией, направленных как на национальные, так и на региональные интересы.

Ключевые слова и словосочетания: Черноморский регион, внешняя политика, приоритеты и направления внешней политики, Болгария, Георгий Пырванов, Владимир Путин, «Южный поток», Третий энергетический пакет ЕС, НАТО

Bulgaria in the Context of Political Developments in the Black Sea Region: The Presidency of Georgi Parvanov (2002-2012)

Hovsepyan Lalita E.

MA, Faculty of International Relations, Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. The article discusses Bulgaria's policy in the Black Sea region, which makes it a significant regional player. The period from 2002 to 2012 was an important time for Bulgaria, as it saw a series of notable changes that affected not only the country itself but also the entire region. In short, the article examines how President Georgi Prvanov managed to integrate Bulgaria into Western institutions through democratic reforms while also actively engaging in several energy projects with Russia that served both national and regional interests.

Keywords & phrases: Black Sea region, foreign policy, foreign policy priorities and directions, Bulgaria, Georgi Prvanov, Vladimir Putin, "South Stream", EU Energy Third Package, NATO

2002-2012 թվականները Բուլղարիայի համար կարևոր իրադարձություններով ժամանակահատված է եղել, քանի որ հենց այդ ընթացքում տեղի ունեցան մի շարք նշանակալից փոփոխություններ, որոնք ազդեցին ոչ միայն երկրի, այլև ամբողջ տարածաշրջանի վրա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ խոսվում է Սևծովյան տարածաշրջանի երկրների հետ Ռուսաստանի սերտ կապերի

մասին, մարդկանց մեծ մասը առաջին հերթին հիշում է նախկին Հարավսլավիայի երկրները, սակայն իրականում Ռուսաստանը շատ ավելի սերտորեն կապված է եղել և մնում է կապված տարածաշրջանի արևելյան հատվածների հետ՝ Բուլղարիայի և Ռումինիայի: Փաստերը ցույց են տալիս, որ 1989 թվականից ի վեր Բուլղարիան չի եղել Ռուսաստանի անվերապահ բարեկամը, իսկ օրինակ՝ Ռումինիան վերջինիս հակառակորդը:

Ե՛վ Բուլղարիան, և՛ Ռուսիան, ինչպես մինչ, այնպես էլ ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամակցելուց հետո, միշտ կանգնած են եղել դիվեմայի առաջ, թե ինչպես գտնել հավասարակշռություն Ռուսաստանի հետ հարաբերությունները զարգացնելու և միաժամանակ նրանից պաշտպանվելու միջև: Ստեղծված իրավիճակը հատկապես բարդ էր բուլղար ղեկավարների համար՝ երկրի ներքին գործերում Ռուսաստանի զգալի ազդեցության պատճառով: Մի խոսքով, հողվածում խոսվում է, թե ինչպես հաջողվեց նախագահ Գ. Պրվանովին երկրում ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելով երկիրը ինտեգրել արևմտյան կառույցներ և միաժամանակ ակտիվորեն ներգրավել Ռուսաստանի հետ մի շարք էներգետիկ նախագծերում, որոնք միտված էին ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային շահերին:

Մեծովյան տարածաշրջանը դարեր շարունակ եղել է տարբեր քաղաքակրթությունների հատման և աշխարհաքաղաքական այնպիսի խաչմերուկ, որը հարուստ է բնական ռեսուրսներով և ունի ռազմավարական դիրք Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի միջև: Պատմական և մշակութային առումով հարուստ տարածաշրջանը դարեր շարունակ եղել է եվրոպական և ասիական հզոր կայսրությունների շահերի բախման կենտրոն, ինչը կապված է եղել ծովային ուղիների վերահսկման, ինչպես նաև ռազմավարական նշանակություն ունեցող էներգետիկ և տրանսպորտային հոսքերի կարևոր հանգույցները տնօրինելու ձգտումների հետ: Այսօր ևս Մեծովյան տարածաշրջանում միափոխվում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային մի շարք պետությունների և միջազգային դերակատարների՝ ինչպիսիք են ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն, շահեր և հետաքրքրություններ [18]: Այս բարդ համատեքստում Բուլղարիան, որպես ԵՄ և ՆԱՏՕ անդամ երկիր, առանցքային դեր ունի աշխարհի ամենադինամիկ տարածաշրջաններից մեկում, սակայն նրա դիրքերը վիճարկվել են և վիճարկվում են մեծ տերությունների և միջազգային դերակատարների աշխարհաքաղաքական շահերի միջև առկա բարդ հավասարակշռության պատճառով:

Կատարելով պատմական ակնարկ պետք է նշել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Բուլղարիայի, ինչպես նաև սոցիալիստական ճամբարի մյուս երկրների արտաքին քաղաքականությունը խիստ սահմանափակված էր, որը բացատրվում էր ԽՍՀՄ-ի գործոնով: Այսպիսով, Բուլղարիայի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները որոշվում էին հենց այդ ճամբարի անդամակցության շրջանակներում [8]: Այն քաղաքական գործիչները, որոնք ղեկավարում էին Բուլղարիան այս ժամանակաշրջանում, այնպիսի արտաքին քաղաքական ուղի էին ընտրում, որը

առավելագույնս մոտ էր ԽՍՀՄ-ի քաղաքականությանը: Սույն իրավիճակը շարունակվում է մինչև երկրում ավտորիտար վարչակազմի և սոցիալիստական բլոկի փլուզումը՝ 1989 թվականը:

Դրան հետևած ժամանակահատվածում Բուլղարիան կանգնած էր ընտրության առաջ՝ կապված հետագա տնտեսական և քաղաքական զարգացման վեկտորը ընտրելու հետ: Պետք է փաստել, որ անցման ամենադժվար փուլերից էր հասարակական կարծիքի փոփոխումը, քանի որ ժողովրդի մեծամասնությունը՝ վախենալով փոփոխություններից, մի կողմից ցանկանում էր պահպանել սոցիալիստական բարքերը, իսկ մյուս կողմից՝ ապրել ինչպես «Արևմուտքը» [2, էջեր 20-22]: Արդյունքում, ինչպես Վարչապետ պակտի անդամ երկրների մեծ մասը, Բուլղարիան ևս ընտրեց բարեփոխումների արևմտամետ ճանապարհը այն է՝ անցում դեպի ժողովրդավարություն, տնտեսական բարեփոխումներ, ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցություն: Երկրի պետական մարմիններում իրականացվեցին ժողովրդավարական բարեփոխումներ, միաժամանակ, ստեղծվեցին նոր ինստիտուտներ: Նման նոր ինստիտուտներից մեկը նախագահի ինստիտուտն էր: Պետք է նշել, որ թեև Բուլղարիան ըստ կառավարման ձևի խորհրդարանական հանրապետություն, որտեղ վարչապետի ձեռքում է կենտրոնացած երկրի ողջ իշխանությունը, այնուամենայնիվ, Սահմանադրությամբ նախագահի լիազորությունները այնչափ սահմանափակված չեն [9], որքան նման կառավարման ձև ունեցող այլ երկրներում, օրինակ՝ Հայաստանում: Այդ իսկ պատճառով հողվածում վերլուծության է ենթարկվել նախագահ Պրվանովի արտաքին քաղաքական առաջնահերթությունները, այլ ոչ թե նրա օրոք իշխանության եղած կառավարությունների որդեգրած արտաքին քաղաքական ուղղությունները, որոնք շատ դեպքերում կապված վարչապետին ներկայացնող քաղաքական կուսակցությունից, խիստ տարբերվում էին:

Այսպիսով, 2001 թվականին Բուլղարիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններում՝ 1990 թվականից ի վեր, առաջին անգամ նախագահ ընտրվեց «Բուլղարիայի Սոցիալիստական կուսակցության» առաջնորդ՝ Գեորգի Պրվանովը: Պրվանովը Բուլղարիայի առաջին նախագահն էր, ով երկու անգամ անընդմեջ ընտրվեց և ունեցավ ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական մի շարք կարևոր և ուշագրավ իրադարձություններով լի տասը կառավարման տարի [10]:

Վերջինիս պաշտոնավարման օրոք երկիրը վերջապես կարողացավ իրականություն դարձնել վաղեմի երկու գլխավոր նպատակները՝ անդամակցությունը ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին, որոնց

ուղղությամբ ակտիվորեն աշխատել էին նախորդ երկու ղեկավարները՝ Ժեյու Ժելեր (1990-1997 թթ) և Պետր Ստոյանովը (1997-2002 թթ): Համեմատելով ինչպես իրեն նախորդած, այնպես և իրեն հաջորդած նախագահների միջև պետք է ընդգծել, որ Պրվանովը այքի էր ընկնում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքով և նրա համար վերջինիս հետ հարաբերությունները առանցքային տեղ էին զբաղեցնում իր օրակարգում, ինչը չի կարելի ասել մյուս առաջնորդների մասին: Եվ այդ միտումները ավելի արտահայտված ձև են ստանում նրա կառավարման երկրորդ մանդատի ժամանակ: Եթե ուսումնասիրենք նախագահ Պրվանովի կատարած այցերը իր պաշտոնավարման առաջին 18 ամիսների ընթացքում, ապա բավականին հստակ կտեսնենք այն աշխարհաքաղաքական քարտեզը, որը նա ուներ իր մտքում: 2002 թվականի գարնանից մինչև 2004 թվականի ամառ Պրվանովը երկու անգամ այցելում է Բոյոսել, մեկ անգամ՝ ԱՄՆ, Իտալիա, Ֆրանսիա և Գերմանիա, իսկ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ այդ նույն ժամանակահատվածում ունենում է վեց հանդիպում [2, էջ 29]:

Այսպիսով, 2000-ական թվականների սկզբին, երբ Ռուսաստանը նոր էր մուտք գործում Վ. Պուտինի ղեկավարման դարաշրջան, Բուլղարիան և Ռումինիան իրենց որոշիչ քայլերն էին անում անդամակցելու ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին: Շուտով երկու երկրներն էլ, ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ջերմացման նպատակով, որոշում են կայացնում աջակցելու վերջինիս կողմից Աֆղանստանում և Իրաքում իրականացվող գործողություններին: Չեն ուշանում Եվրոպայից քննադատությունները, և շուտով Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը իր հայտարարության մեջ Բուլղարիային և Ռումինիային անվանում է անպատասխանատու: «Եթե նրանք ցանկանում էին նվազեցնել իրենց շանսերը Եվրոպային միանալու համար, դժվար թե ավելի լավ միջոց գտնեին» [1, էջեր 121-123]: Ռուսաստանը, ակնհայտորեն, կիսում էր Ժ. Շիրակի տեսակետը, սակայն Մոսկվան այնքան դրամատիկ չէր ընկալում Սոֆիայի և Բուխարեստի ամերիկամետ քայլերը (Բուլղարիայի դեպքում՝ թվացյալ), որովհետև հենց Վլադիմիր Պուտինը այդ նույն ժամանակատվածում աշխատում ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների բարելավման ուղղությամբ:

Իր հերթին, Բուլղարիայի ջանքերին ի պատասխան, ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը «ԱՄՆ-Բուլղարիա դիվանագիտական հարաբերությունների 100-ամյակի տոնակատարության» իր ելույթի ժամանակ ընդգծեց. «Բուլղարիայի օգնությունը ԱՄՆ-ին Աֆղանստանում և Իրաքում իրականացված գործողությունների հարցում շատ

մեծ է եղել: Բուլղարիան կարծես «փոխհատուցում է» ԱՄՆ-ին (նկատի է առնվում ԱՄՆ-ի կողմից տրամադրված ահռելի ֆինանսական աջակցությունը, ռազմական ուղորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով՝ Դաշինքի նորմերին համապատասխանելու համար¹), որը աննկատ չի մնում և ի պատասխան պետք է ընդգծել, որ անցյալ շաբաթ Միացյալ Նահանգների Սենատը միաձայն քվեարկեց Բուլղարիայի՝ Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ դառնալու օգտին» [15]: ԱՄՆ-ն ի դեմս Բուլղարիայի ձեռք բերեց վստահելի դաշնակից, ինչպես ՆԱՏՕ-ի շրջանակներում և տարածաշրջանում, այնպես էլ այլ միջազգային նախաձեռնություններում [17]:

Այսպիսով, 2004 թվականի մարտի 18-ին Բուլղարիայի Ազգային ժողովը վավերացնում է Հյուսիսատլանտյան դաշինքին միանալու պայմանագիրը և արդեն մարտի 29-ին դառնում Դաշինքի լիիրավ անդամ: ՆԱՏՕ-ի 2004 թվականի ընդլայնումը եզակի էր՝ միանգամից Դաշինքի անդամ դարձան 7 պետություն, որոնց թվում էին նաև նախկին ԽՍՀՄ երկրներ Լատվիան, Լիտվան և Էստոնիան: ՆԱՏՕ-ին Բուլղարիայի անդամակցումը հիանալի հնարավորություն ընձեռնեց Դաշինքին զգալիորեն մեծացնելու իր ներկայությունը և ամրապնդելու իր ազդեցությունը Սևծովյան տարածաշրջանում և Հարավարևելյան Եվրոպայում: Մինչ այս ՆԱՏՕ-ի միակ Սևծովյան երկիրը Թուրքիան էր [7]: Չմոռանանք ևս մեկ անգամ ընդգծել, որ ընդլայնումը տեղի ունեցավ ռուս-ամերիկյան և

¹ ՆԱՏՕ-ին անդամակցելու ամենաբարդ փուլերից էին՝ 1. Հյուսիսատլանտյան Դաշինքի կանոնադրության դրույթներին համապատասխանելու համար պաշտպանության ոլորտում բարեփոխումներ և վերակառուցումներ իրականացնելը (անհրաժեշտ բարեփոխումներն իրականացնելու համար պահանջվում էր վիթխարի դրամական միջոցներ՝ 27 329,45 մլն դոլար: Այդ գումարը 58 անգամ գերազանցում էր երկրի պաշտպանության նախարարության տարեկան բյուջեն), 2. Մյուս բարդ խնդիրներից էր հասարակական կարծիքի ձևավորումը (1996 թ-ի դրությամբ, ըստ սոցիոլոգիական հարցումների, երկրի բնակչության միայն 20%-ն էր կողմ ՆԱՏՕ-ին անդամակցելուն), իսկ քաղաքացիների մեծամասնությունը, հատկապես ավագ սերունդը, թերահավատորեն էին վերաբերվում ՆԱՏՕ-ին՝ դաշինքը կապելով ռազմական և արտաքին քաղաքական միջամտության սպառնալիքների հետ: Կառավարությունից շատ ջանքեր պահանջվեցին քաղաքացիներին տեղեկացնելու անդամակցության առավելությունների մասին: Բոլոր բարեփոխումներն ու վերակառուցումներն չէին իրականանա, եթե չլիներ ԱՄՆ ահռելի ֆինանսական օգնությունը՝ 1990-ական թվականներից մինչև 2007 թվականը: Այս ֆինանսական օգնությունը օգնեց Բուլղարիային արդիականացնել իր բանակը, կառուցել ժողովրդավարական ինստիտուտներ, նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը և նախապատրաստվել 2004 թվականին ՆԱՏՕ-ին անդամակցությանը: Միացյալ Նահանգների կառավարության ներդրումները ռազմական կրթության, մարզման և մոդեռնիզացման ոլորտում նպատակ ունեին ավելի ուժեղ և ավելի մարտունակ բուլղարական զինված ուժերի ստեղծմանը, որոնք անհրաժեշտության դեպքում կգործեին ԱՄՆ ուժերի հետ միասին [7; 10; 17]:

Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերությունների ժամանակավոր բարելավման ժամակաշրջանում: Մոսկվան սկզբնական շրջանում ՆԱՏՕ-ն ընկալում էր միայն որպես «վիրտուալ սպառնալիք», սակայն չի կարելի ասել թե անհանգստացած չէր իր անվտագային ռիսկերի շուրջ: Վերջինս, որպեսզի պահպանի Սևծովյան տարածաշրջանում այն ժամանակվա իր գերիշխող ռազմական ներկայությունը գնալով սկսում է ուժեղացնել դիրքերը Սևաստոպոլում և Դրիմում:

2004 թվականի օգոստոս ամսին Բուլղարիայի արտաքին գործերի նախարար Սողոմոն Պասին փորձեր էր անում երկիրը դարձնել Վրաստանը ՆԱՏՕ-ին կապող օղակ: Հատկանշական է, որ նույն ժամանակահատվածում բուլղարները նաև զենք էին վաճառում Թբիլիսիին: Այդ իրադարձություններին հաջորդում է Մոֆիայի և Բուխարեստի համատեղ հանձնառությունը ԵՄ-ի «Սևծովյան սիներգիա» տարածաշրջանային նախաձեռնությանը (2007 թ.) [1, էջեր 121-123]: Սակայն, այստեղ պետք է ընդգծել, որ Բուլղարիայի և Ռումինիայի արտաքին քաղաքական դիրքորոշումները միշտ չէ, որ համընկնում էին: Օրինակ՝ Ռումինիայում 2004 թվականի դեկտեմբերին նախագահական ընտրություններում հաղթում է Տրայան Բասեսկուն, ով ավելի կոշտ դիրքորոշում է որդեգրում նախկին խորհրդային հարևանների նկատմամբ: Բասեսկուն կարծում էր, որ Ռումինիան կարող է գլխավորել ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի ընդլայնումը Սևծովյան տարածաշրջանում, խոսում էր «Բուխարեստ-Լոնդոն-Վաշինգտոն» առանցքի մասին և իր հաղթանակը Սոցիալ-դեմոկրատական կուսակցության նկատմամբ համեմատում էր Կիևի «Նարնջագույն հեղափոխության» հետ: Նա նաև մտերմիկ հարաբերություններ է հաստատում Վրաստանի նախագահ Միխայիլ Սակաշվիլիի և Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոյի հետ: Այս ամենի հետ մեկտեղ, Մոսկվայի տեսանկյունից Ռումինիան շարունակում էր նաև վտանգ ներկայացնել Մոլդովայի Հանրապետության համար: Բուխարեստը մոլդովացիների համար միաժամանակ թե՛ ավագ եղբայր էր, թե՛ դեպի Արևմուտք տանող դարպաս: Մի խոսքով Մոսկվայի հետ շփումները նվազագույնի էին հասցված: Ռումինիան և Ռուսաստանը միակարծիք էին միայն մեկ հարցում՝ երկու երկրներն էլ մերժում էին Կոսովոյի անկախությունը [1, էջեր 121-123]:

Ինչ վերաբերվում է Բուլղարիային պետք է ընդգծել, որ տվյալ ժամանակահատվածում Բուլղարիայի դիրքորոշումը հետևյալն էր՝ լինելով **եվրոպական և արևմտյան միությունների անդամ, միաժամանակ պահել լավ հարաբերություններ Ռուսաստանի հետ**, այդպիսով հավասարակշռելով երկու կողմերի հետ հարաբերությունները: Այս տեսակետը ուներ

լայն աջակցություն հասարակության շրջանում, քանի որ Բուլղարիայի պատմական, մշակութային և տնտեսական կապերը Ռուսաստանի հետ միշտ էլ կարևոր դեր են խաղացել երկրի համար, և ժամանակի կառավարությունը չէր ցանկանում, որ այդ կապերը վնասվեին ընդլայնված եվրոպական ինտեգրման պատճառով: Հետաքրքրական է, որ 2005 թվականին խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Բուլղարիայի Սոցիալիստական կուսակցություն»-ը վերադառնում է իշխանության և վարչապետ է նշանակվում Մոսկվայում կրթություն ստացած և մինչ 1990-ական թվականների կեսերը Ռուսաստանի քաղաքացի հանդիսացող Մերզել Ստանիշևը: Այս ներքաղաքական շրջարձի արդյունքում Գ. Պրվանովի դիրքերը էլ ավելի ու ավելի ամրապնդվեցին, քանի որ վերջինս ձեռք բերեց գաղափարակից, նույն արտաքին առաջնահերթությունները կիսող կառավարություն՝ ի դեմս Ս. Ստանիշևի [2, էջեր 34-35]:

ՆԱՏՕ-ի անդամակցությանը հետևեց ԵՄ անդամակցությունը: 2007 թվականի հունվարի 1-ից Բուլղարիան և Ռումինիան դարձան եվրոպական ընտանիքի իրավահավասար անդամներ [12]: Գեորգի Պրվանովը ԵՄ-ին անդամակցելու իր ելույթում հայտարարեց. «*Այսօր պատմական արդարության օր է, քանի որ բուլղարացիները միշտ իրենց եվրոպացի են զգացել*»: Մոսկվայի պատասխան քայլը եղավ Բրյուսելում Ռուսաստանի դեսպան Վ. Չիժովի արված հայտարարությունը բուլղար լրագրողներին. «*Մեր ավանդաբար եկած լավ հարաբերությունների շնորհիվ Բուլղարիան մեզ համար հետաքրքիր է նաև որպես ԵՄ անդամ: Եվ այդ հետաքրքրությունն միայն տնտեսական ուղղության մասին չէ: Բուլղարիան կարող է իր ներդրումն ունենալ ԵՄ-Ռուսաստան հարաբերություններում, և մենք հույս ունենք, որ դուք մեր Տրոյական ձին կդառնաք ԵՄ-ում*»: Հասկացե՛ք այս լավ իմաստով [6]: Իսկ իրականում թյունն այլ էր՝ Սևծովյան տարածաշրջանում ստեղծված բարդ աշխարհաքաղաքական դրության պայմաններում, երբ բուլղարացիներին անդադար ստիպում էին ընտրություն կատարել «Արևմուտքի» և «Արևելքի» միջև Բուլղարիան ցանկանում էր դառնալ բնական կամուրջ, այլ ոչ թե Տրոյական ձի Ռուսաստանի և ԵՄ միջև: Դա, իհարկե, պահանջում էր ճկուն դիվանագիտություն և անցանկալի հարցերում մանևրելու նուրբ կարողություն, որը և փորձում էին իրականացնել օրվա իշխանությունները:

Հայտնի է, որ ԵՄ անդամակցությունը ենթադրում է, որ անդամ պետությունը պետք է հետևի ԵՄ-ի արտաքին քաղաքականությանը, որը գրեթե միշտ հակադրության մեջ է Ռուսաստանի արտաքին քաղաքականության հետ, և ավելի խիստ քաղաքական, տնտեսական և

իրավական չափանիշներ սահմանի՝ հատկապես այնպիսի հարցերում, ինչպիսիք են Ուկրաինայի ճգնաժամը և էներգետիկ նախագծերը: Եվ թվում էր, թե այս իրադարձությունների դինամիկան և բնույթը պետք է անխուսափելիորեն անդրադառնային Ռուսաստանի և Բուլղարիայի փոխհարաբերությունների վրա, սակայն պետք չէ մոռանալ, որ Ռուսաստանը գորպայ էներգետիկ շուկայում միշտ եղել է և մինչ օրս էլ մնում է առանցքային դերակատար, իսկ էներգետիկ անվտանգության թեման միշտ եղել է նախագահ Պրվանովի արտաքին քաղաքական առաջնահերթությունների շարքում [5]:

2008 թվականը նշանավորվեց Ռուսաստանի հետ մի շարք էներգետիկ համաձայնագրերի ստորագրմամբ: Հունվարի 18-ին ռուսական պետության ղեկավարի Բուլղարիա կատարած պաշտոնական այցի շրջանակներում՝ «Դոնդուկով» 2 նախագահական նստավայրի «Գերբերի» սրահում կայացած արարողության ժամանակ Գերբերի Պրվանովը և Վլադիմիր Պուտինը ստորագրեցին էներգետիկայի ոլորտում ութ երկկողմ համաձայնագրերի փաթեթ (Պրվանովը այն անվանում էր «մեծ էներգետիկ շեմ»), որի մեջ էին մտնում հայտնի «Հարավային հոսք» գազատարի, «Բելենե» ատոմակայանի կառուցման և «Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս» նավթամուղի կառուցման միջազգային նախագծերը [1, էջեր 124-125]: «Չեմ հիշում, որ մեկ այցի ընթացքում այսքան շատ պայմանագրեր ստորագրվեին», – համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց նախագահ Պրվանովը և հավելեց. «Հաջողվեց ընդամենը մի քանի ամսում հասնել երկկողմ շահեկան համաձայնությունների, որոնք նպաստում են բուլղարական տնտեսության զարգացմանը» [13]: Իր հերթին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ բանակցությունների արդյունքները ցույց են տալիս, որ ռուս-բուլղարական հարաբերությունները զարգանում են վերելքով: Նա իր ելույթում նշեց. «Այսօր հաջողվեց համաձայնեցնել շատ կարևոր նախագծեր, և դա անհնար կլիներ, եթե չլինեինք վստահելի գործընկերներ», – ընդգծում է Պուտինը: Ռուս առաջնորդը նաև նշեց, որ Բուլղարիան Ռուսաստանի համար առաջատար առևտրային գործընկեր է և կարևոր խնդիրներից մեկը համարեց արտահանման ներուժի զարգացումը¹ [13]:

¹ Այստեղ պետք է փաստել, որ նախորդ տասը տարիների ընթացքում բուլղարական ապրանքների արտահանումը Ռուսաստան կրճատվել էր յոթ անգամ (2,4 մլրդ դոլարից հասնելով 100–200 մլն դոլարի): Նախկինում բուլղարական արտահանումների 70%-ը բաժին էր ընկնում Ռուսաստանին: Իսկ 2007 թվականից սկսած աստիճանաբար աճում էր բուլղարական ապրանքների արտահանումը ԵՄ շուկաներ, քանի որ անդամակցությունը Բուլղարիային հնարավորություն տվեց օգտվել ԵՄ-ի առևտրային առավելություններից և ներդրումային հնարավորություններից [3]:

Փաթեթի առաջին «Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս» նախագիծը խիստ վիճահարույց նախագիծ էր: Նախ չկային հստակ երաշխիքներ անցողականությունը ապահովելու մասով և երկրորդ Բուլղարիայի Սևծովյան ափամերձ շրջանների տեղական իշխանությունները դեմ էին հանդես գալիս նախագծին, քանի որ այդ տարածքները կարևոր զբոսաշրջային կենտրոններ էին: 2009 թվականին իշխանության է գալիս «Գերբ» կուսակցությունը և վարչապետ Բ. Բորիսովը, որպես պատրվակ օգտագործում է Բուրգասի և Պոմորիեի տեղական հանրաքվեների արդյունքները և 2011 թվականի մայիսին դուրս գալիս նախագծից [1, էջ 126]:

Պատկերն լրիվ այլ էր փաթեթի երկրորդ նախագիծ՝ «Բելենե» ատոմակայանի դեպքում: Այն ենթարկվեց մեծ քննադատության, քանի որ անգամ «Կոլոդույ» ատոմակայանի չորս ռեակտորների փակվելու պարագայում երկիրը միևնույն է ավելի շատ էներգիա էր արտադրում քան սպառում էր: Ինչ վերաբերվում է հարևան երկրներ էլեկտրաէներգիայի արտահանմանը, ապա վերջին տարիներին պահանջարկը գնալով նվազել էր, այնպես որ արտահանման հեռանկարներն էլ խոստումնալից չէին [4]: Այնուամենայնիվ կառավարությունը որոշում է կայացնում հոգուտ երկրորդ ատոմակայանի կառուցմանը, որը բնականաբար ունենում է քաղաքական հետևանքներ: «Բելենե» լինելու էր առաջին ատոմակայանը, որը կառուցվելու էր Ռուսաստանի կողմից արդեն ԵՄ անդամ հանդիսացող երկրում: Չեն ուշանում ԵՄ-ի քննադական հայտարարությունները և զգուշացումները, որոնց բուն մտավախությունը, իհարկե, Ռուսաստանի դիրքերի ամրապնդումն էր և հեղինակության բարձրացումը տարածաշրջանում: Բուլղարիայի էներգետիկայի նախարար Տրայչո Տրայկովը ծրագիրը ֆինանսական տեսանկյունից անիրագործելի էր համարում: 2009 թվականին նախագծից դուրս է գալիս գերմանական (RWE) էներգետիկ ընկերությունը, իսկ Սոֆիան հրաժարվում է Վ. Պուտինի առաջարկած 2 միլիարդ եվրո վարկից, որի փոխարեն վերջինս 80% բաժնեմաս էր պահանջում [1, էջ 126]: Ծախսերը գնալով աճում էին՝ տնտեսական դանդաղման և ռեցեսիայի պայմաններում, իսկ պետական միջոցներով ծրագիրը շարունակելը ուղղակի անհնար էր դառնում: Ծուռով բանակցությունները մտնում են փակուղի և վարչապետ Բոյկո Բորիսովը 2012 թվականին կասեցնում է նախագիծը:

Ինչ վերաբերվում է «Հարավային հոսք» նախագծին, ապա պետք է փաստել, որ այն ստեղծվել էր մի քանի տնտեսական և քաղաքական նպատակներով և սառեցվեց նույն դրդապատճառներով, որի արդյունքում Ռուսաստանը որոշեց կառուցել այլընտրանքային «Թուրքական

հոսք»-ը: «Հարավային հոսք» գազատարի հզորությունը նախատեսվում էր լինել 63 միլիարդ մ³: Նախագիծը նախաձեռնել էր «Գազպրոմ» ընկերությունը մի շարք եվրոպական էներգետիկ ընկերությունների հետ համատեղ: Նախագծի արժեքը գնահատվում էր 23,5 միլիարդ եվրո, որից միայն՝ 14 միլիարդը հատկացվելու էր ստորջրյա հատվածի կառուցման համար: Գազատարը սկիզբ էր առնելու Ռուսաստանի Անապա քաղաքի տարածքում, այնուհետև Սև ծովի հատակով պետք է հասներ Բուլղարիայի Վառնա քաղաքի ակի: Իսկ երթուղու ցամաքային մասը անցնելու էր Բուլղարիայի, Սերբիայի, Հունգարիայի և Սլովենիայի տարածքներով մինչև Տարվիզո քաղաք (Իտալիա) կամ դեպի Բաունգարտեն հանգույց (Ավստրիա) [14]:

Խոսելով Ռուսաստանի՝ նախագծի հետ կապված տնտեսական և քաղաքական նպատակների մասին կարելի է առանձնացնել սույնը. 1) 2009 թվականին, երբ ակտիվորեն ընթանում էին «Հարավային հոսք»-ի շուրջ բանակցությունները, ԵՄ գազի ներմուծման 42%-ը բաժին էր ընկնում Ռուսաստանին: Այդ ծավալի 80%-ը եվրոպական երկրներ էր մտնում Ուկրաինայի տարածքով (ռուսական գազի հիմնական տարանցիկ ուղին, մյուս երկու ուղղիները անցնում էին Թուրքիայի և Բելառուսի տարածքներով): 1993 թվականից ի վեր Ռուսաստանն ու Ուկրաինան տարածայնություններ ունեին ուկրաինական տարածքով գազի գնման և տարանցման ծախսերի հետ կապված: Միաժամանակ, Ռուսաստանը «Հարավային հոսք» նախագիծը դիտարկում էր, որպես երթուղիների դիվերսիֆիկացման հնարավորություն՝ դրանով իսկ մեծացնելով իր մատակարարումների նկատմամբ վերահսկողությունը և նվազեցնելով տարանցիկ երկրների՝ մասնավորապես Ուկրաինայի ազդեցությունը: 2) Եվրոպայում էներգառեսուրսների աճող պահանջարկի ֆոնին (ԵՄ-ում գազի սպառման տարեկան աճը կանխատեսվում էր 0,6–0,7% միջակայքում, իսկ Եվրոպան այդ ժամանակ կարողանում էր ապահովել սպառվող գազի միայն 34%-ը) Ռուսաստանը աննախադեպ հնարավորություն ուներ մեծացնելու իր արտահանվող գազի ծավալները:

Խոսելով Բուլղարիայի տնտեսական օգուտների մասին կարելի է առանձնացնել հետևյալը. 1. Բուլղարիան ունենալու էր «Գազպրոմ» ընկերությունում 50% բաժնեմաս, ինչի հետևանքում՝ նախագծի մեկնարկից սկսած Բուլղարիայի եկամուտը գազի տարանցումից պետք է աներ չորս անգամ՝ հասնելով 2,5 միլիարդ եվրոյի: Սա առաջին դեպքն էր, երբ «Գազպրոմը» ստորագրում էր համաձայնագիր «50-50» բաժնետոմսերով [11]: 2. Բուլղարիան իրավունք էր ունենալու որոշել տարանցիկ վճարը, որը կվճար-

վեր իր երկրին բնական գազի տարանցման համար [14]:

Ինչ վերաբերվում է Նախագծի խոչընդոտներին և այն մասին թե ինչու վերջիվերջո այն սառեցվեց և կյանքի չկոչվեց, և Բուլղարիան հայտնվեց երկու քարի արանքում կարելի է առանձնացնել սույնը. 1. Նախագծի վերաբերյալ Եվրահանձնաժողովի կողմից ստացված մի շարք բողոքների և անհամաձայնությունների արդյունքում: Հիմնական խնդիրը կայանում էր՝ 2009 թվականին ընդունված ԵՄ երրորդ էներգետիկ փաթեթի դրույթներին չհամապատասխանելու մեջ: Վերոնշյալ փաթեթը հանդիսանում էր մի շարք կանոնակարգերի և դրույթների ժողովածու, որի նպատակն էր բարեփոխել Եվրոպական միության էներգետիկ շուկան և դարձնել այն ավելի արդար և մրցունակ: Այս փաթեթի դրույթների համաձայն, եթե գազամուղը կամ այլ էներգետիկ համակարգ անցնել մի քանի երկրների տարածքով անհրաժեշտ էր, որ տվյալ երկիրը անկախ լիներ էներգիայի մատակարարներից և այն երկրների կառավարություններից, որոնք շահագրգռված էին օգտագործելու այդ գազամուղը կամ այլ էներգետիկ համակարգը քաղաքական նպատակներով: Այսպիսով, երրորդ էներգետիկ փաթեթը Եվրոպայում ուժեղացրեց էներգետիկ շուկաների մրցակցությունը և նշանակալիորեն բարձրացրեց ԵՄ դերը էներգետիկ քաղաքականության մեջ [16]: Այս ֆոնին, «Հարավային հոսք»-ի կառուցումը, ըստ ԵՄ կանոնակարգերի, չէր կարող իրականացվել առանց համապատասխան փոփոխությունների և համաձայնությունների, որոնք ստիպեցին Ռուսաստանին վերանայել իր ռազմավարությունը և նախապատվությունը տալ այլ նախագծերի, ինչպիսին օրինակ՝ «Թուրքական հոսք»-ը: 2. Նախագծի ծախսերը շարունակաբար աճում էին: Մեծ ներդրումներ էր պահանջվում կատարել ինչպես հիմնական գազամուղի կառուցման, այնպես էլ տարբեր խոչընդոտներ հաղթահարելու համար (օրինակ՝ բնապահպանական հարցեր, իրավական խնդիրներ և այլն): Բուլղարիան ստիպված էր կասեցնել նախագիծը իր տարածքում՝ եվրոպական օրենսդրության պահանջների անհամապատասխանության պատճառով, ինչը հանգեցրեց լրացուցիչ ֆինանսական խնդիրների: Միաժամանակ, ԵՄ-ի կողմից սկսված իրավաբանական գործընթացներն ու քննադատությունը խոչընդոտեցին ֆինանսական ներդրումների ներգրավմանը, ինչի արդյունքում նախագծում ներգրավված միջազգային ընկերությունները հրաժարվեցին լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներդնելուց: Փաստացի նախագծի ավելացող ծախսերը, երկկողմ իրավաբանական խնդիրները և արտաքին քաղաքական ճնշումները ոչ միայն քաղա-

քական, այլ նաև ֆինանսական տեսանկյունից վերջինս դարձրին ոչ իրագործելի:

Այսպիսով, 1989 թվականից ի վեր Բուլղարիան երկար ճանապարհ է անցել՝ Սոցիալիստական ճամբարի անբաժանելի մասից վերածվելով ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի անդամ, սակայն դա չի խանգարել, որ Մոսկվայի հետ հարաբերությունները շարունակեն մնալ երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթություններում: 2002-2012 թվականներին Գեորգի Պրվանովը փորձում էր հավասարակշռված քաղաքականություն որդեգրել՝ զուգորդելով Ռուսաստանի հետ ավանդական կապերը և Եվրատյանյան գործընկերների հանդեպ պարտավորությունները: Կարելի է փաստել, որ մի կողմից նա փորձում էր ամեն կերպ երկրում ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելով երկիրը ինտեգրել արևմտյան կառույցներ և միաժամանակ փորձում էր Ռուսաստանի հետ պահպանել ջերմ հարաբերություններ, քանի որ այդ երկիրը դեռևս կարևոր տնտեսական գործընկեր էր Բուլղարիայի համար: Ժամանակագրական իրադարձությունները ցույց տվեցին, որ նախագահ Պրվանովը իր որդեգրած քաղաքականության շնորհիվ, երկիրը հնարավորինս անցնում էր հանեց ստեղծված իրավիճակից: Իհարկե, Ռուսաստանին չհաջողվեց լիովին իր ազդեցությունը տարածել բուլղարական քաղաքական վերնախավի վրա և իրականացնել «Տրոյական ձիու» ծրագիրը, ձախողվեցին նաև ռուսական էներգետիկ ծրագրերը և Մոսկվան չկարողացավ խոչընդոտել Բուլղարիայի արևմտյան ինտեգրմանը, սակայն Պրվանովը մինչև իր պաշտոնավարման վերջին տարիները ջերմ հարաբերություններ պահպանեց Ռուսաստանի՝ մասնավորապես իր գործընկեր Վ. Պուտինի հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Бечев Д.**, «Русия се завръща на Балканите». – София, 2018. – 367 с.
2. **Дайнов Е.**, «Модельт “Станишев”». – Велико Търново: Абагар, 2010. -247 с.
3. **Костов И.**, «Свидетелства за прехода 2000-2009». – София, 2024. – 383 с.
4. **Хиновски И.**, «Записки по Българската енергетика». 2021. – 336 с.
5. Балканите в Българската външна политика: приоритет или “паралелна реалност”. // Фондация Фридрих Еберт. – София, 2022 г. ISBN 978-619-7666. URL: <https://goo.su/zoGaoyN> (Ссылка укорочена, дата обращения: 24.02.2025)
6. Денацификация сербов и “тайные договоры” Болгарии с “Газпромом”: Балканы за неделю. // Регнум, Октябрь 2008. URL: <https://regnum.ru/article/1062910> (Дата обращения: 24.02.2025)

7. Двадцать лет назад произошло крупнейшее расширение НАТО на восток. Как политика США привела к военному конфликту на Украине?, Lenta. Ru, Март 2024. URL: <https://lenta.ru/articles/2024/03/29/suslov/> (Дата обращения: 24.02.2025)
8. Инициатива на Президента на Република България – „Младежка визия за развитие на България“, София, 05 декември 2012 г. URL: <https://www.president.bg/docs/1355400978.pdf> (Дата обращения: 14.01.2025)
9. Конституция на Република България. В сила от 13.07.1991 г., Чл 92-104 URL: <https://www.justice.government.bg/home/normdoc/521957377> (Дата обращения: 24.02.2025)
10. Министерство на външните работи на Република България, История, Процесът на присъединяване на България към НАТО, URL: <https://www.mfa.bg/bg/3948> (Дата обращения: 24.02.2025)
11. Министерство иностранных дел Российской Федерации, Соглашение между правительством Российской Федерации и правительством Республики Болгарии о сотрудничестве при создании газопровода для транзита природного газа через территорию Республики Болгарии. Дата вступления в силу: 12.08.2008г. URL: <https://goo.su/K1aMU08> (Ссылка укорочена, дата обращения: 24.02.2025)
12. Присъединяването към ЕС – задача на вътрешната политика, 12.02.2004. URL: <https://goo.su/Bm9ojv> (Ссылка укорочена, дата обращения: 24.02.2025)
13. Путин и Първанов подписаха осем ключови споразумения, 18 януари 2008. URL: <https://goo.su/nbE9L> (Ссылка укорочена, дата обращения: 24.02.2025)
14. Что такое «Южный поток»: кому был нужен и какие проблемы возникли. 23.08.2024г. URL: <https://www.rbc.ru/base/23/08/2024/66c831a89a7947ddb1c0fb42> (Дата обращения: 14.01.2025)
15. Bulgaria and the United States: Allies in Democracy and Partners in Expanding Freedom, Secretary Colin L. Powell Celebration of the 100th Anniversary of U.S.-Bulgarian Diplomatic Relations Battenburg Square, Sofia, Bulgaria, May 15, 2003. URL: <https://goo.su/U4CX> (Հղումն կարճեցված է, դիտման ամսաթիվը. 24.01.2025)
16. EU Third Energy Package. URL: https://energy.ec.europa.eu/index_en (Դիտման ամսաթիվը. 14.03.2025)
17. Evgeniy K., Bulgaria external relations briefing: The Dynamics of the Relations Between Bulgaria and USA, China-CEE Institute, ISSN: 2560-1601, February 2021. URL: https://china-cee.eu/wp-content/uploads/2021/03/2021er02_Bulgaria.pdf (Դիտման ամսաթիվը. 24.02.2025)
18. The Black Sea Region in EU Policies, Marusya Lyubcheva, Black Sea Institute, Friedrich Ebert Stiftung, Burgas, Bulgaria, July 2010. URL: <https://library.fes.de/pdf-files/bueros/sofia/07769.pdf> (Դիտման ամսաթիվը. 24.02.2025)

Տճանաչանմանվել է՝ 24.03.2025

Րեցենզирована/Գրախոսվել է՝ 10.04.2025

Принята/Ընդունվել է՝ 17.04.2025